«Հաստատում եմ»
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական
խորհրդի նախագահ, տնօրեն, պ. գ. թ.
դոցենտ Ս. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

01.02.2010թ.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Գլուխ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալումն իրականացվում է համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի (08.05.1999թ.) մրցույթի անցկացման և նրա արդյունքների հիման վրա պայմանագրի ձևակերպման միջոցով:

2. Դասախոսական կազմի տարակարգերն են՝

ԴԱՍԱԽՈՍ, ԱՍԻՍՏԵՆՏ, ԴՈՑԵՆՏ, ՊՐՈՖԵՍՈՐ

3. Դասախոսական կազմի տարակարգերի աշխատանքների բնութագրերը.

ԴԱՍԱԽՈՍ

- գործնական և լաբորատոր պարապմունքների, ուսումնական սեմինարների անցկացում,
- հանրակրթական առարկաների դասավանդում,
- մասնագիտական առարկաներից կուրսային աշխատանքների և նախագծերի ղեկավարում,

Դասախոսի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, որոնք ունեն համապատասխան մասնագիտություն կամ դրան համարժեք որակավորման աստիճան:

ԱՍԻՍՏԵՆՏ

- դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացում /հիմնականում բակալավրատում/,
- ուսանողների հետ խորհրդատվությունների կանոնավոր անցկացում,
- բակալավրատի շրջանավարտների ավարտական աշխատանքների ղեկավարում,
- մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների:

Ասիստենտի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, որոնք համապատասխան մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան կամ ավարտել են ասպիրանտուրան, կամ էլ հանձնել են բոլոր մինիմումները և ունեն 10 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ:

Արվեստի մասնագիտության գծով ասիստենտի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, որոնք համարվում են ՀՀ Նկարիչների միության անդամ, կամ ունեն 15 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ և մասնակցել են անհատական ցուցահանդեսների:

ԴՈՑԵՆՏ

- դասախոսությունների անցկացում (հիմնականում բակալավրատում), ինչպես նաև մագիստրատուրայում և ասպիրանտուրայում,
- գիտամեթոդական սեմինարների անցկացում,
- բակալավրների ավարտական /դիպլոմային/ աշխատանքների, մագիստրանտների և ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում,
- թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակում,
- հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում,
- զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, որակավորման և գիտական աստիճաններ շնորհող մարմինների, փորձագիտական և խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքների:

Դոցենտի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, որոնք համապատասխան մասնագիտության գծով ունեն գիտական աստիճան և բուհում գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 4 տարվա ստաժ:

Արվեստի մասնագիտության գծով կարող են զբաղեցնել անձինք, որոնք համարվում են ՀՀ Նկարիչների միության անդամ, ունեն 15 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ և մասնակցել են ՀՀ Նկարիչների միության կողմից կազմակերպված ցուցահանդեսների:

ՊՐՈՖԵՍՈՐ

- դասախոսությունների անցկացում /հիմնականում բակալավրատում/, ինչպես նաև մագիստրատուրայում և ասպիրանտուրայում,
- գիտամեթոդական սեմինարների անցկացում, մագիստրանտների և ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում,
- մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերով նախատեսված նոր մասնագիտությունների դասընթացների հիմնում և կազմակերպում,
- ատենախոսության /թեկնածուական, դոկտորական/ պաշպանությունից հետո գիտական և ուսումնական ձեռնարկների հրատարակում,
- զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
- ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի հիմնում և ղեկավարում,
- մասնակցություն բուհական և արտասահմանյան գիտակազմակերպչական, գիտամեթոդական, փորձագիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, հանձնախմբերի, հանրապետական և միջազգային գիտատեխնիկական միությունների, ընկերակցությունների և այլ մարմինների աշխատանքների,
- խորհրդատվական գործունեություն,
- գիտության տվյալ բնագավառում ստացած արդյունքների բավարար ճանաչում հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

Պրոֆեսորի պաշտոն կարող են զբաղեցնել անձինք, որոնք որպես կանոն ունեն դոկտորի գիտական աստիճան և բուհում գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 9 տարվա ստաժ, որից ոչ պակաս, քան 5 տարին՝ դոցենտի տարակարգով:

Արվեստի մասնագիտության գծով պրոֆեսորի, դոցենտի և ասիստենտի պաշտոնները զբաղեցնելու համար, մյուս բոլոր չափանիշներին համապատասխանելու դեպքում, գիտական աստիճանի առկայությունը պարտադիր պայման չէ:

4. Պրոֆեսորադասախոսական կազմի սահմանված տարակարգերին առընթեր մասնաճյուղում գործում են նաև պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր /ամբիոնի պաշտոնային դրույքների հաշվին/.

- խորհրդատու պրոֆեսոր /դոցենտ/ ՀՀ կամ արտասահմանյան բուհերից, հետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններից հրավիրված և մասնաճյուղում մասնակի կամ լրիվ դրույքով, ինչպես նաև մասնագիտական ծառայություն մատուցելու կարգավիճակով համապատասխան տարակարգում ժամանակավորապես ձևակերպված մասնագետ, որոնց նպատակն է վարել հատուկ դասընթացներ և գիտամեթոդական սեմինարներ, ներդնել նոր կրթական ծրագրեր և կառավարման միջոցներ:

5. Բացի վերը նշված տարակարգերից, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գործում են նաև մանկավարժական այլ տարակարգեր՝ *ԱՄԲԻՈՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՎԱՐԻՉ, ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՊՐՈՖԵՍՈՐ, ՀՐԱՎԻՐՎԱԾ ՊՐՈՖԵՍՈՐ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՍԻՍՏԵՆՏ:*

6. Ամբիոնի վարիչների, պրոֆեսորների, դոցենտների, ասիստենտների և դասախոսների թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցույթի արդյունքների հիման վրա կնքված պայմանագրով, մինչև 5 տարի ժամկետով:

Մրցույթով անցած մեկից ավելի թեկանածուների դեպքում պայմանագիր է կնքվում նրանցից առավելագույն ձայներ ստացած անձի հետ:

Ծանոթություն.

Ամբիոնի առաջարկությամբ ֆակուլտետի խորհուրդը կարող է դիմել տնօրենին՝ 1-3 տարով կնքված պայմանագրերը երկարաձգելու մինչև 5 տարի, առանց նոր մրցույթ հայտարարելու:

7. Թափուր պաշտոնների տեղակալմանը կարող են հավակնել՝

ա. *ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ ԵՎ ՊՐՈՖԵՍՈՐ*

պրոֆեսորի գիտական կոչում ունեցող կամ գիտությունների դոկտորի գիտական աստիճանով անձինք, որոնք ունեն առնվազն 9 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ, որից ոչ պակաս, քան 5 տարին՝ դոցենտի պաշտոնում:

բ. *ԴՈՑԵՆՏ*

դոցենտի գիտական կոչում ունեցող կամ գիտությունների դոկտորի /թեկանածուի/ աստիճան և 4 տարուց ոչ պակաս մանկավարժական աշխատանքի փորձ ունեցող անձինք:

գ. *ԱՍԻՍՏԵՆՏ*

համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան ունեցող կամ ասպիրանտուրան ավարտած անձնիք:

դ. *ԴԱՍԱԽՈՍ*

մագիստրոսի կամ դրան համարժեք որակավորում ունեցող անձինք:

ԴՈՑԵՆՏԻ պաշտոն կարող են զբաղեցնել.

- 15 և ավելի տարիներ բուհում ուսումնագիտական արդյունավետ գործունեություն իրականացրած դասախոսները, որոնց աշխատանքների բնութագիրը համապատասխանում է դոցենտին ներկայավող որակական չափանիշներին,
- բուհ՝ հիմնական աշխատանքի հրավիրվող, առանց մանկավարժական ստաժի առաջատար մասնագետները, որոնք ունեն գիտական աստիճան:

ՊՐՈՖԵՍՈՐԻ պաշտոն կարող են զբաղեցնել.

- 25 և ավելի տարիներ բուհում ուսումնագիտական արդյունավետ գործունեություն իրականացրած դոցենտները, որոնք ունեն թեկնածուի գիտական աստիճան և զբաղեցնում են դոցենտի պաշտոն և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է պրոֆեսորին ներկայացվող որակական չափանիշներին:

Գլուխ II

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

8. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին մասնաճյուղի տնօրենը հաստատում է ընթացիկ տարում պայմանագրերը ավարտելու կապակցությամբ առաջացող թափուր մրցութային տեղերի ցուցակը: Կադրերի բաժինը պայմանագրային ժամկետը լրանալուց 2 ամիս առաջ տեղյակ է պահում համապատասխան աշխատակիցներին:

9. Թափուր տեղերի տեղակալման համար մրցույթները հայտարավում են ուսումնական տարվա ընթացքում: Մրցույթի վերաբերյալ հայտարարություն է տրվում պարբերական մամուլում, ընտրություններից առնվազն երկու ամիս առաջ: Դիմումներն ընդունվում են հայտարարության օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:

10. Մրցույթի մասնակիցները ներկայացնում են դիմում և ներքոհիշյալ փաստաթղթերը տնօրենին.

- կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- բարձրագույն կրթության վկայականի /դիպլոմի/, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի պատճենները, վավերացված սահմանված կարգով,
- բնութագիր վերջին աշխատավայրից,
- հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը:

11. Մրցույթին մասնակիցների փաստաթղթերը տնօրենի համապատասխան մակագրությամբ ուղարկվում է ամբիոնի քննարկմանը:

12. Տնօրենը, դեկանը, ամբիոնի վարիչն իրավունք ունեն մրցույթի մասնակցին հանձնարարել կարդալու մեկ կամ երկու փորձնական դասախոսություն, անցկացնելու սեմինար և գործնական պարապմունքներ: Դասախոսության թեման հանձնարարվում է ամբիոնի կողմից, ուսումնական պլանի և ծրագրի շրջանակներում:

Ամբիոնն իր գրավոր եզրակացությունը ներկայացնում է մրցութային հանձնաժողովին:

13. Մրցույթի մասնակիցների վերաբերյալ բոլոր նյութերը քննարկվում են համապատասխան ամբիոնի նիստում: Ամբիոնի վարիչի թեկնածությունը քննարկելիս ամբիոնի նիստը վարում է ֆակուլտետի դեկանը:

Ամբիոնը բաց քվերկությամբ, եթե այլ որոշում չի կայացվել, ընդունված գրավոր կարծիքը ներկայացնում է ֆակուլտետի մրցութային հանձնաժողովին: Նշված հանձնաժողովը ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված նյութերը, ինչպես նաև մրցույթի մասնակիցների կարդացած դասախոսությունների, անցկացրած սեմինար և գործնական պարապմունքների վերաբերյալ ամբիոնի եզրակացությունը, եթե այդպիսիք եղել են և ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ գրավոր եզրակացություն: Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման գծով հանձնաժողովը իրավասու է մրցույթի մասնակիցներից և ամբիոնների վարիչներից պահանջելու պարզաբանումներ, կապված մրցութային ընտրության հետ:

14. ա. Ամբիոնի վարիչների, պրոֆեսորների, դոցենտների, ասիստենտների և դասախոսների մրցույթը անցկացվում է մասնաճյուղի գիտխորհրդում՝ նախապես այդ հարցը քննարկելով ֆակուլտետների խորհուրդների նիստերում:

Մրցույթով անցած ամբիոնի վարիչներն ու պրոֆեսորները հաստատվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ:

բ. Համահամալսարանական ամբիոնի վարիչների մրցույթը անցկացվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդում:

Բուհում ոչ պակաս քան 3 տարի աշխատած հավակնորդների համար ներկայացվում են նաև ուսանողների կողմից նրա մանկավարժական գործունեության գնահատման սոցիոլոգիական հարցման արդյունքները, որոնք ստացվում են սահմանված կարգով:

Ծանոթություն

Առանձին դեպքերում տնօրենի կարգադրությամբ դոցենտների, ասիստենտների և դասախոսների մրցույթը կարող է անցկացվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդում:

15. Մրցույթին մասնակցողների դիմումները քննարկելու համար համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից՝ բաց քվեարկությամբ /եթե այդ մասին այլ որոշում չի կայացվել/, ընտրվում են մրցութային հանձնաժողովներ, որոնք ձևավորվում են հիմնականում տվյալ խորհրդի անդամ պրոֆեսորներից և դոկտորներից: Հանձնաժողովը կազմվում և գործում է ուսումնական տարվա ընթացքում: Հանձնաժողովի նախագահը նշանակվում է հանձնաժողովի անդամներից՝ տնօրենի կողմից:

16. Մրցույթին մասնակցողների ցուցակը՝ /անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան թիվ, աշխատանքի վայր, զբաղեցրած պաշտոն, գիտական կոչում և աստիճան, կրթություն, տվյալ մասնագիտությամբ աշխատանքային ստաժ/, տրվում է խորհրդի անդամներին և փակցվում է մասնաճյուղի գիտխորհրդի նիստից 7 օր առաջ:

17. Փակ գաղտնի քվեարկության համար մրցույթի բոլոր մասնակցողների ազգանունները մտցվում են մեկ քվեաթերթիկի մեջ: Թեկնածության վերաբերյալ համաձայնությունը կամ մերժումը ներկայացվում է համապատասխանաբար «կողմ» կամ «դեմ» բառերի ջնջումով: Մնացած դեպքերում քվեաթերթիկը համարվում է անվավեր:

18. Ձայները հաշվելու համար խորհուրդը քվեարկությունից առաջ ընտրում է խորհրդի երեքից ոչ պակաս

անդամներից կազմված հաշվիչ հանձնաժողով: Հաշվիչ հանձնաժողովը հրապարակում է յուրաքանչյուր թեկնածուի քվեարկության արդյունքը:

Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է խորհրդի կողմից և կցվում մրցութային փաստաթղթերին:

19. Խորհրդի որոշումը համարվում է օրինական, եթե քվարկությանը մասնակցել է խորհրդի կազմի 2/3-ը: Քվեարկվողը համարվում է մրցույթն անցած, եթե հավաքել է խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների 50%-ից ավելին:

20. Խորհրդի որոշումը կարող է ներկայցվել բողոքարկման տնօրենին՝ 7 օրվա ընթացքում:

21. Տնօրենը իրավասու է բեկանելու մրցույթ անցկացրած խորհրդի որոշումը, եթե կանոնակարգից չեղում է արձանագրվել:

Մրցույթի արդյունքները կարող են չեղյալ հայտարարվել միայն սույն կանոնակարգը խախտելու դեպքում:

22. Մրցույթին դիմած անձինք կարող են մասնակցել խորհրդի նիստին, որտեղ քննարկվում է իրենց թեկնածությունը:

23. Արգելվում է հղի, կրծքով կերկրող, ինչպես նաև մինչև երեք տարեկան երխա ունեցող մայրերին վերջիններիս հղիության, կրծքով կերակրելու կամ երեխային խնամելու շարժառիթով մրցութային գրաֆիկ չընդգրկելը, կամ մրցույթով անցնելուց հետո նույն շարժառիթներով նրանց հետ պայմանագիր չկնքելը:

24. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ժամավճարով դասավանդողները, ինչպես նաև 0,25 կամ 0,5 դրույքով համատեղողները առանց մրցույթի հրամանագրվում է տնօրենի կողմից:

25. Տնօրենը /դեկանը/ իրավասու է մասնաճյուղի գիտական խորհրդին /ֆակուլտետի խորհրդին/ ներկայացնելու զբաղեցրած պաշտոններում դասավանդող դասախոսների համապատասխանության հարցը: Եթե խորհուրդը փակ, գաղտնի քվեարկությամբ հաստատագրում է պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի անհամապատասխանությունը զբաղեցրած պաշտոնում, ապա տնօրենը խորհուրդի որոշումն ընդունելուց մեկ ամիս անց վերջինս ազատում է աշխատանքից:

Դասախոսների պաշտոնների համապատասխանության մասին խորհրդի /ֆակուլտետի/ որոշմամբ նախորդում է դասախոսի աշխատանքային գործունեության ստուգումը մասնաճյուղի /ֆակուլտետի/ գիտակա խորհրդի անդամներից կազմված հանձնաժողովի կողմից ներգրավելով մասնաճյուղի արհկոմի ներկացուցչին:

Հանձնաժողովի կազմը հաստատում է տնօրենը, որը իրավասու է հանձնաժողովում ընդգրկելու այլ բուհերի, գիտական հաստատությունների աշխատակիցների:

Նշված հանձնաժողովի նյութեն ուղարկվում են մասնաճյուղի /ֆակուլտետային/ հանձնաժողով, որը հիմնավորում է դասախոսի՝ կոնկրետ անձի զբաղեցրած պաշտոնում համապատասխան լինելը: Հանձնաժողովի եզրակացությանը և ներկայացվող նյութերին դասախոսը կարող է ծանոթանալ նիստից մեկ շաբաթ առաջ:

26. Ամբիոնի բաժանման և ամբիոնների միավորման ժամանակ արգելվում է դասախոսների վաղաժամկետ մրցույթի անցկացումը:

27. Պայմանագրի ձևակերպման մերժումը կարող է բողոքարկվել դատարանում համաձայն ՀՀ գործող Օրենսդրության:

Գլուխ III

ՊԱՏՎԱՎՈՐ ՊՐՈՖԵՍՈՐԻ, ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ, ՊՐՈՖԵՍՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ և ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՍԻՍՏԵՆՏԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԿԱՐԳԸ

28. Պատվավոր պրոֆեսորի տիտղոս շնորհելը.

Նշանակումների հանձնախմբի՝ տնօրենի հետ համաձայնեցված առաջարկությամբ համապատասխան ֆակուլտետի խորհուրդը բաց քվեարկությամբ մասնաճյուղի գիտխորհուրդ կարծիք է ներկայացնում պատվավոր պրոֆեսորի տիտղոսի թեկնածության վերաբերյալ: Այդ կարծիքի հիման վրա մասնաճյուղի նշանակումների հանձնախումբը կազմում և մասնաճյուղի գիտխորհրդին է ներկայացնում զեկուցագիր՝ մասնաճյուղի պրոֆեսորներին և արտասահմանյան երկրների վաստակաշատ գիտնականներին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պատվավոր պրոֆեսորի տիտղոս շնորհելու մասին:

Պատվավոր պրոֆեսորի տիտղոս շնորհելու համար կարող են հիմք հանդիսանալ.

- միջազգային ճանաչում ունեցող գիտական ուղղության կամ դպրոցի ստեղծումը,
- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման համար որոշիչ նշանակություն ունեցող բարեփոխումների նախաձեռնումը և իրականացումը:

Պատվավոր պրոֆեսորի տիտղոսի հավակնորդի գործի քննարկումն ընթանում է մասնաճյուղի գիտխորհրդի նիստում, փակ գաղտնի քվեարկությամբ և դրական որոշում ընդունելու դեպքում մասնաճյուղի տնօրինությունը կանոնադրության սահմանված կարգով հավակնորդին շնորհում է պատվավոր պրոֆեսորի տիտղոս և տալիս է համապատասխան ձևի դիպլոմ:

29. Խորհրդատու պրոֆեսորի /դոցենտի և ուսումնական ասիստենտի/ պաշտոնների հավակնորդները փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան ամբիոնի վարիչին, կազմակերպվում է հավակնորդի հարցի քննարկումը ամբիոնի նիստում և մեկ շաբաթվա ընթացքում նրա թեկնածությունը համաձայնեցվում է ֆակուլտետի նշանակումների հանձնախմբի, ֆակուլտետի դեկանի, ուսումնական բաժնի հետ և նրա գործը ներկայացնում տօրենին պայմանագիր /կոնտրակտ/ կնքելու համար:

30. Տնօրենը մրցույթի արդյունքների հիման վրա կնքում է պայմանագիր պրոֆեսորների հետ փաստաթղթերի ստացման օրվանից 10-օրյա ընթացքում:

31. Դոցենտների, ասիստենտների, դասախոսների հետ պայմանագիրը կնքում է տնօրենը:

32. Համապատասխանաբար՝ կնքված պայմանագրերի հիման վրա պաշտոնների նշանակման հրամանները ստորագրում է տնօրենը:

33. Պայմանագրի վաղաժամկետ լուծարումը կարող է առաջարկվել գիտխորհրդի կողմից միայն տնօրենի համաձայնության առկայության դեպքում:

Գլուխ IV

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

34. Սույն կարգը կիրառվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդում հաստատման օրվանից: